



ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Առաջադրանքների լուծման համար տրվում է **75** րոպե

5-6-րդ դասարաններ

- Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:
- Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:
- Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 120 միավոր:
- Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:
- Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:

3 միավոր գնահատվող առաջադրանքներ


1. **Անալի, բալանի, տասներկու, ութսունմեկ, պատճեն** բառերից ո՞րը գայրացրեց Գիտունիկին:
 Ա. անալի Բ. բալանի Գ. տասներկու Դ. ութսունմեկ Ե. պատճեն
2. Ի՞նչ բառ կստացվի **զցկեբլ**-ից, եթե յուրաքանչյուր տառ փոխարինվի այբուբենում նրան նախորդող տառով:
 Ա. երամակ Բ. երիզակ Գ. երիկամ Դ. երիցուկ Ե. երիվար
3. **ՄՐՑԵԼ → ՄՐՅՈՒՄ = ՄՐՅՈՒԹՅՈՒՆ** բառերի շարքը կազմված է որոշակի օրինակաչափությամբ: Պատասխանի տարբերակներից ո՞րը չի ենթարկվում այդ օրինակաչափությանը:
 Ա. զննել Բ. վերլուծել Գ. թագադրել Դ. պարզաբանել Ե. կառուցել
4. Նանեն պահարանի առաջին դարակում շարեց իր փափուկ խաղալիքները՝ ձիուկ, հորթուկ, գորշուկ, խոզուկ, արջուկ: Հետո մտածեց, որ դրանցից մեկը մյուսներից տարբերվում է, և այն տեղափոխեց երկրորդ դարակ: Նանեն ո՞ր խաղալիքը տեղափոխեց երկրորդ դարակ:
 Ա. գորշուկը Բ. խոզուկը Գ. արջուկը Դ. հորթուկը Ե. ձիուկը
5. Ի՞նչ բառ պետք է գրել  -ի փոխարեն, որ **լոր**-ից ստանանք **ձագ**:
լոր - լար - լակ -  - թագ - ձագ
 Ա. կարթ Բ. ձեթ Գ. թարթ Դ. կալ Ե. թակ
6. Ո՞ր չես կարող գնալ:
 Ա. թեյարան Բ. դասարան Գ. մարզարան
 Դ. գործարան Ե. նվագարան
7. Պատասխանի տարբերակների բառերից ո՞րն է «անափ»:
 Ա. հա*շտակել Բ. ա*իբերան Գ. ա*ամերձ Դ. հա*շտապ Ե. գետա*
8. Պատասխանի տարբերակների բառերից ո՞րը կօգնի նոր շունչ տալ **գործ, ածուխ, սպի, խաչ, զեռ** բառերին:
 Ա. փայտ Բ. քար Գ. սև Դ. աստղ Ե. երկաթ

9. Ձախից կարդաս՝ տքնաջան աշխատող է, աջից կարդաս՝ թևավոր խոսք է, մի տառ հանես, հով կանի քեզ ամռան շոգին: Ո՞ր բառն է:

Ա. տանձի Բ. նաժիշտ Գ. ծառա Դ. բարդի Ե. մշակ

10. Մեղվիկը որոշեց իր փորիկին հաճելի բառեր գրել և նվիրել ծաղիկներին, սակայն այդ բառերի մի մասը սխալ էր գրված: Քանի բառ պետք է ջնջի մեղվիկը, որ միայն ճիշտ գրված բառեր նվիրի:

Ա. երեք Բ. չորս Գ. հինգ
Դ. վեց Ե. յոթ



4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. **Երկու տառով կենդանի, Աջից կարդաս ընտանի, Բայց միջատ է շատ տհաճ, Երբ կարդում ես ձախից աջ:**
 Ա. ուլ Բ. ձի Գ. լու Դ. իծ Ե. եզ
12. **Շտեմարան, պահեստ, ամբար, պահեստարան, հորանցք, մատան, զետեղարան, մթերանոց** բառերը «նույն բակից» են՝ բացի մեկից: Ո՞րն է «հարևան բակից»:
 Ա. պահեստ Բ. ամբար Գ. մթերանոց Դ. հորանցք Ե. զետեղարան
13. Պատասխանի տարբերակների բառերը, բացի մեկից, ընդունում են «պատճենված» տառեր: Ո՞ր տարբերակի բառերից մեկը չի ընդունում «պատճենված» տառ:
 Ա. ու-ել, տա-երային Բ. ու-ընթաց, խ-ոց Գ. ու-իչ, գ-ել
 Դ. ու-ակի, պ-անողմ Ե. ու-որդել, կե-ե
14. **Մյունաշար, բերանփակ, փայտածոդ, անվափուկ, որսափոս** բառերից չորսը հանդես են գալիս աճպարարական նույն հնարքով: Ո՞ր բառն է զուրկ այդ շնորհքից:
 Ա. մյունաշար Բ. բերանփակ Գ. փայտածոդ
 Դ. անվափուկ Ե. որսափոս
15. Եթե **մարգարտահ** բառից հանենք վախը, հետո՝ տարածաշրջանը, ապա կստանանք մի բառ, որը նաև խառնագիր է: Պատասխանի տարբերակներից ո՞րն է այդ խառնագրի լուծումը:
 Ա. լեռ Բ. սար Գ. գագաթ Դ. կատար Ե. մարգ
16. Պատասխանի տարբերակների բառերից ո՞րն է կազմվում **ԵՐԿԱՆՔ** բառի բոլոր տառերով:
 Ա. քերական Բ. քներակ Գ. երկունք Դ. ակունք Ե. անկունք

17. Աջ կողմում բերված է տառաթվային ծածկագիր, որում յուրաքանչյուր տառին համապատասխանում է մեկ թվանշան: Նույն տառերին համապատասխանում են նույն թվանշանները: Բերված տարբերակներից ո՞րն է համապատասխանում այդ տառաթվային ծածկագրին:

ՄԵՂՈՒ
+
ՄԵՂՈՒ
ՊԱՐՄ

3662	2828	1025	3609	4502
+	+	+	+	+
<u>3662</u>	<u>2828</u>	<u>1025</u>	<u>3609</u>	<u>4502</u>
Ա. 7324	Բ. 5656	Գ. 2050	Դ. 7218	Ե. 9004

18. Պատասխանի տարբերակներից որո՞ւմ կա դարձվածքի իմաստին չհամապատասխանող միտք:

- Ա. Ով շուտ էր կռահում, նա *գլխի ընկալ*:
- Բ. Ով ձանձրացնում էր, *գլուխ տարալ*:
- Գ. Ով շուտով պիտի ծնվեր, *լույս աշխարհ եկալ*:
- Դ. Ով չարախոս էր, *լեզուն կապվեց*:
- Ե. Ով աշխարհից անտեղյակ էր, *ուղտի ականջում քնեց*:

19. Մխալ, բոլոր, մտածել, աքլոր, մոծակ բառերից չորսը նույն օրինաչափությամբ կրկնակի «քամվելուց» հետո դրանք ասելիք ունի: Ո՞րը քամվելուց հետո ասելիք չունի:

- Ա. սխալ
- Բ. բոլոր
- Գ. մտածել
- Դ. աքլոր
- Ե. մոծակ

20. Մեղուն ուզում է դուրս գալ ու թռչել, խաղալ է ուզում արևի շողով, Ուզում է իր նուրբ թևերը թրջել Երազում տեսած ծաղկունքի ցողով:

Ըստ Հ. Սահյանի այս քառատողի՝ ի՞նչ անելու ցանկություն մեղուն չունի:

- Ա. երազում տեսած ծաղիկների նման նուրբ թևեր ունենալու
- Բ. արևի ճառագայթների հետ խաղալու
- Գ. թևիկները շաղով թրջելու
- Դ. դուրս ելնելու ու ճախրելու
- Ե. սավառնելու ու խաղալու

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. — չափի՛ր, — կտրի՛ր:
— նապաստակի հետևից ընկնողը ոչ մեկին չի բռնի:
Հերոսը — անգամ է մեռնում, վախկոտը — :
Մի՛ ունեցիր — դահեկան, ունեցի՛ր — բարեկամ:
Ձեռքը ձեռք է լվանում, — ձեռքը՝ երես:
Խելոքին —, անխելքին — ու — :

1 1000
10 2 100
2

Աջ կողմում բերված թվերից ո՞րն է միայն մեկ անգամ գործածվել ներկայացված ասացվածքներում:

- Ա. 1
- Բ. 2
- Գ. 10
- Դ. 100
- Ե. 1000

22. Ավարառու արքայի տան ծիրանին ընկալ: Նկարչին անհրաժեշտ իրերից մեկը հնարամտորեն «թաքնվել» է տրված նախադասության մեջ: Ո՞ր առարկան է դա:

- Ա. մատիտ
- Բ. կտավ
- Գ. թուղթ
- Դ. ներկապնակ
- Ե. վրձին

23. Շաքեն *խիճ* և *մուկ* բառերից վերցրեց բոլոր բաղաձայնները, իսկ *ավագ* և *փիղ* բառերից բոլոր ձայնավորները և դրանցով կազմեց բառ, որը ցույց է տալիս առարկա: Շաքեն այդ առարկայով կարող է՝

- Ա. խաղալ
- Բ. ուտել
- Գ. գրել
- Դ. նկարել
- Ե. քանդակել

24. Ո՞ր առածի երկրորդ մասն է գաղտնագրված նկարելուկով:

Ճնայքնուճերթ բենայրդատդայրդաինիցո կենզխնայր:

- Ա. Շատի հետևից ընկնողը,
- Բ. Երեսից հայելի,
- Գ. Ձին նստեց՝ աստծուն մոռացավ,
- Դ. Ես աղա, դու աղա,
- Ե. Թան որ ունենամ,

25. Երբ *ականջ, ջահել, լուրջ, վերջ, ջահ* բառերում նույն տառը պահանոցի խաղա, այդ բառերը կկերպարանափոխվեն: Ի՞նչ նոր բառ չենք ստանա բառերի կերպարանափոխումից հետո:

- Ա. տարեց
- Բ. ռումբ
- Գ. տեղեկություն
- Դ. վախ
- Ե. շեղ

26. *Գուներանգ, մտախոհ, հիասքանչ, մարտակոծիվ, դժվարամատույց* բառերը, բացի մեկից, ենթարկվում են նույն օրինաչափությանը: Ո՞րը չի ենթարկվում այդ օրինաչափությանը:

- Ա. գուներանգ
- Բ. դժվարամատույց
- Գ. հիասքանչ
- Դ. մարտակոծիվ
- Ե. մտախոհ

27. *Բաց, բուն, գալ, սար, սալ, հաց, վար* բառաշարքում տեղավորվեց նաև *հուն* բառը: Ի՞նչ ընդհանուր հատկություն ունեն այս բոլոր բառերը:

- Ա. ունեն միևնույն ձայնավորը
- Բ. դասավորված են այբբենական կարգով
- Գ. սկզբում ձայնավոր են ընդունում
- Դ. ընդունում են միևնույն տառն ու դառնում նոր բառ
- Ե. կորցնում են մեկ տառ ու դառնում նոր բառ

28. Կարենը տատիկի համար նկարեց *քանան, դդմիկ, զարդատուփ, և ժամացույց*: Պատասխանի տարբերակների բառերից ո՞րը պետք է դնել մեղվիկի փոխարեն:

- Ա. նուշ
- Բ. արև
- Գ. ընձուղտ
- Դ. սալոր
- Ե. ելակ

29. Պատասխանի տարբերակների բառերից չորսին հաստուկ է մի հետաքրքիր օրինաչափություն: Ո՞ր բառին այդ օրինաչափությունը հաստուկ չէ:

- Ա. աչքաբաց
- Բ. գետաղաղձ
- Գ. եռագարկ
- Դ. էջանշան
- Ե. թագաժառանգ

30. Արամը բառարանում փնտրում էր դարձվածք, որի իմաստը կլիներ *անհիմն գործ ձեռնարկելը*: Նա առանձնացրեց հինգը, որոնցից միայն մեկն էր ճիշտ: Ո՞րն էր ճիշտը:

- Ա. ավազի վրա տուն շինել
- Բ. վառողը չոր պահել
- Գ. բոլոր կամուրջներն այրել
- Դ. պղտոր ջրում ձուկ որսալ
- Ե. արջի ծառայություն մատուցել